12321

8.9
2-24

1907

4/5

2001

Գ 3-158ա
513
338.9
Հ-24

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան. «Հերմէս» Մադաթ. փող. № 5
1907

7
44965-ակ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ԱԳԻ.ԵՍՍՀ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

29518-63

Ընկերութիւնների վերաբերեալ գործերի Թիֆլիսի նահանգական ատեանի օրագրական որոշման համաձայն՝ «Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնը» մտցրված է ցուցակի մէջ համարով № 30, ներկայ կանոնադրութիւնը հաստատված է և նրա գործունէութեան սկզբնաւորութեան արգելքներ չը կան. 2 մարտի 1907.

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար՝ փոխ-նահանգապետի պաշտօնակատար՝

Ա. Զերնեավոկիյ

I Ընկերութեան նպատակը

§ 1. Ընկերութեան նպատակն է նըպաստել արհեստների և գիւղատնտեսական արդիւնագործութեան զարգացմանը և տարածմանը Անդրկովկասի ազգաբնակութեան մէջ։

II Գործունէութեան եղանակները

§ 2. Իր նպատակին հասնելու համար Ընկերութիւնը բացում է արհեստանոցներ, դպրոցներ և դասընթացքներ, կազմում է զրոյցներ և դասախօսութիւններ, հրատարակում է ձեռնարկներ, գրքոյկներ, հետազօտութիւններ և ալբոմներ, կազմակերպում է արդիւնագործութիւններ, պահում է ինստրուկտօրներ, հրահանգիչներ, կազմակերպում է արդիւնքների ցուցահանդէսներ և վաճառահան-

դէսներ, նպաստում է արդիւնքների վաճառահանման և յարաբերութիւններ է կապում վաճառողների հետ։

III՝ Ընկերութեան կազմը, անդամների իրաւունքները եւ պարտաւորութիւնները

§ 3. Ընկերութիւնը բաղկացած է երկու սեռի անդամներից անսահման թւով՝ ա) պատուաւոր, բ) աջակից և գ) իսկական։

Ծանօրութիւն. Ընկերութեան չեն մասնակցում անչափահասները և դպրոցներում սովորողները.

§ 4. Պատուաւոր անդամներ կարող են լինել երկու սեռի անձեր, որոնք Ընկերութեան օգտին արել են նշանաւոր նուիրատուութիւններ կամ մատուցել են նրան առանձին ծառայութիւններ։ Այդպիսի անդամները առաջարկվում են վարչութեան կողմից և ընտրվում են ընդհանուր ժողովից։

§ 5. Աջակից անդամներ կարող են լինել երկու սեռի անձեր, որոնք համակրում են ընկերութեան նպատակներին։ Աջակից անդամի կոչումը յատկացվում է վարչութեան կողմից, որը զեկուցանում է այդ մասին մերձաւոր Ընդհանուր Ժողովին։

§ 6. Իսկական անդամները վճարում են տարեկան 6 ռուբլի։ Միանուագ ոչ պակաս քան 150 ռուբլի վճարողները, ազատվում են տարեկան վճարներից և համարվում են Ընկերութեան մշտական անդամներ։

§ 7. Ընկերութեան անդամ լինել ցանկացողը յայտնում է այդ մասին վարչութեանը։

§ 8. Ընկերութիւնից հեռացած են համարվում այն անձերը, որոնք չեն տուել իրանց անդամավճարը երեք ամսվայ ընթացքում։

§ 9. Ընկերութեան այն անդամները, որոնք տեղափոխվում են Կովկասից դէպի պետութեան ուրիշ մասերը կամ արտասահման, կարող են մնալ Ընկերութեան անդամներ ընդհանուր հիմունքներով։

IV՝ Ընկերութեան միջոցները՝

§ 10. Ընկերութեան միջոցները կազմվում են ա) անդամավճարներից, բ) Ընկերութեան դրամագլուխների տոկոսներից, գ) նուէրներից, կտակներից ուրիշ պատահական մուտքերից և Ընկերութեան պատկանող գոյքերի եկամուտներից։

Ծանօրութիւն. Ընկերութիւնը իր միջոցները ուժեղացնելու նպատակով կարող է կազմել, պատշաճաւոր ամեն անգամ թոյլտուութեամբ, համերգներ, ներկայացումներ, երաժշտական և ընտանեկան երեկոյթներ, և այլն։

§ 11. Ընկերութեան դրամական միջոցները դասաւորվում են այսպէս՝ ա) հիմնադրամ և բ) շրջանադարձ։

§ 12. Հիմնադրամը կազմվում է յատուկ նուիրատուութիւններից յատուկ հիմնադրամի համար, նաև այն գումարներից, որոնք իւրաքանչիւր տարի Ընդհանուր Ժողովի կողմից յատկացվում են հիմնադրամի համար։

§ 13. Միւս բոլոր մուտքերը, նոյնպէս

և հիմնադրամի տոկոսները կազմում են շրջանադարձ դրամագլուխը, որը գործադրվում է Ընկերութեան բոլոր ընթացիկ ծախքերի համար։

§ 14. Ընկերութեան մէջ մտնող դրամական գումարները, նոյնպէս Ընկերութեան դրամագլուխները պէտք է տոկոսներ բերելու համար մտցնվեն վարկային հաստատութիւններից մէկի մէջ կամ վերածվեն պետական կամ կառավարութեան կողմից երաշխաւորված տոկոսաբեր թղթերի։ Առձեռն գումար Ընկերութեան դրամարկղի մէջ կարող է գտնվել միայն Ընկերութեան ընթացիկ ծախքերի համար անհրաժեշտ մի գումար, որի քանակը որոշված կը լինի Ընդհանուր Ժողովի կողմից։

Ѵ. Ընկերութեան գործերի վարումը

§ 15. Ընկերութեան գործերը վարում են՝ ա) վարչութիւնը և բ) ընդհանուր ժողովները։

Ա. Վարչութիւնը

§ 16. Վարչութիւնը բաղկացած է նախագահից և վեց անդամից, որոնք ընտրվում են Ընկերութեան անդամներից երեքամեայ ժամանակով։

§ 17. Որպէս զի միաժամանակ չը հեռանան Վարչութեան անդամները, իւրաքանչիւր տարի դուրս է գալիս նրանց 1/3 ը, Ընկերութեան գոյութեան առաջին երկու տարիները վիճակով, իսկ յետոյ ընտրութեան անդրանկութեան կարգով և նրանց փոխարէն Ընդհանուր Ժողովի կողմից ընտրվում է նորերի համապատասխան թիւը։

Ծանօթութիւն. Ընկերութեան կազմից հեռացող անդամները կարող են նորից ընտրվել, եթէ կը տան իրանց համաձայնութիւնը։

§ 18. Վարչութեան անդամների հիւանդութեան, մահի կամ ժամանակաւոր բացակայութեան միջոցին փոխարինելու համար նոյն կարգով և նոյն ժամանակամիջոցով ընտրվում են 2—4 փոխանդամներ։ Փոխանդամները մտնում են իրանց պաշտօնավարութեան մէջ ստացած ընտրական ձայների շատութեան կարգով։ Նրանց պատասխանատուութիւնը սահմանափակվում է միայն այն ժամանակամիջոցով, երբ նրանք մասնակցել են Ընկերութեան գործերի կառավարութեանը։

§ 19. Վարչութեան անդամները ընտրում են իւրաքանչիւր տարի իրանց միջից փոխ-նախագահի և գանձապահի և բաժանում են իրար մէջ պարապմունքները փոխադարձ համաձայնութեամբ։

§ 20. Վարչութիւնը ժողովվում է Ընկերութեան գործերով զբաղմունքների համար ըստ չափու անհրաժեշտութեան։

§ 21. Վարչութեան նիստերի օրինականութեան համար անհրաժեշտ է նախագահի և ոչ պակաս քան երեք անդամի ներկայութիւնը։

§ 22. Վարչութեան նիստերի բոլոր գործերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ։ Ձայների հաւասարութեան դէպքում նախագահի ձայնը տալիս է գերակշռութիւն։

§ 23. Վարչութեան պարտաւորութիւնները են՝ ա) ընդհանուր ժողովների որոշումների կատար ածումը, բ) հաշուապահութեան և դրագրութեան վարումը, գ) դրամարկղի օպերացիաների գործողութիւնը, դ) անդամ լինել ցանկացողների յայտարարութիւնների քննութիւնը, ե) Ընկերութեան հիմնարկութիւնների գործունէութեան վրա հսկումը և ղեկավարութիւնը, զ) ընկերութեան միջոցները շատացնելու աղբիւրներ և միջոցներ գտնելը, է) գեկուցումներ կազմելը այն բոլոր առարկաների վերաբերութեամբ, որոնք պէտք է ներկայացվեն ընդհանուր ժողովի քննութեան, ը) կոնցերտների, երեկոյթների կազմակերպութիւնը և ուրիշ ընթացիկ գործեր, թ) յարաբերութիւններ պատշաճաւոր տեղերի և անձերի հետ Ընկերութեան անունից, ժ) Ընկերութեան տեղական ճիւղերի բացումը։

Բ. Ընդհանուր ժողովներ

§ 24. Ընդհանուր ժողովները հրաւիրվում են վարչութեան կողմից և լինում են սովորական և արտակարգ։

§ 25. Սովորական ընդհանուր ժողովները, որոնք նշանակվում են իւրաքանչիւր տարի ապրիլ ամսին, ունեն իրանց պարապմունքների առարկաներ հետևեալ՝ ա) վարչութեան գործերի տարեկան տեղեկագրի և վերաստուգող յանձնաժողովի զեկուցագրի քննութիւնը, բ) մուտքերի և ծախքերի հաշուի և նախահաշուի հաստատումը, գ) վարչութեան անդամների և փոխանդամների, նոյնպէս վերաստուգող յանձնաժողովի երեք անդամի ընտրութիւնը, դ) վարչութեան և վերաստուգող յանձնաժողովի համար հրահանգի հաստատումը, ե) ընկերութեան կանոնադրութեան փոփոխութեան և լրացման կամ նրա փակման խնդիրների քննութիւնը, զ) ընկերութեան և իւր ճիւղերի հետ յարաբերութիւնների հրահանգի մշակումը։

§ 26. Արտակարգ ընդհանուր ժողովները նշանակվում են վարչութեան հայեցողութեամբ կամ երբ յայտնել են այդ մասին գրաւոր կերպով ոչ պակաս քան տասն անդամ, մանրամասն բացատրելով քննութեան առարկաները. վարչութիւնը պարտաւոր է նշանակել ժողով տուած յայտարարութիւնից յետոյ երկու ամսվայ ընթացքում։

§ 27. Իւրաքանչիւր ընդհանուր ժողովի ժամանակի և տեղի մասին ընկերութեան անդամները ծանուցվում են տեղական լրագիրների միջոցով։

§ 28. Ընդհանուր ժողովները բացում է վարչութեան նախագահը։ Իսկ ժողովին նախագահելու համար ընտրվում է ամեն անդամ ընկերութեան անդամներից մէկը, որը չէ պատկանում ոչ վարչութեան և ոչ վերաստուգող յանձնաժողովի կազմին։

§ 29. Ընդհանուր ժողովը, թէ սովորականը և թէ արտակարգը, կայացած է համարվում, երբ ներկայ են Թիֆլիսում ապրող անդամների մի հինգերորդ մասը։ Իսկ այն հարցերի քննութեան համար, որոնք վերաբերում են անշարժ կալուածք-

ներ ձեռք բերելուն կամ ծախելուն, կանոնադրութեան փոփոխութեան կամ լրացման, ընկերութեան փակման, նրա գործերի լիկվիդացիայի, պահանջվում է ոչ պակաս, քան Թիֆլիսում ապրող անդամների կէսի ներկայութիւնը։ Անդամների այդպիսի թուի չը գալու դէպքում նոյն գործերի քննութեան համար հրաւիրվում է երկուշաբթից յետոյ երկրորդ ընդհանուր ժողով, որը համարվում է կայացած՝ որքան էլ լինեն անդամները։

§ 30. Ընդհանուր ժողովներում գործերը որոշվում են գաղտնի քուէարկութեամբ, ներկայ անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ։

§ 31. Ընկերութեան իրաքանչիւր իսկական անդամ ընդհանուր ժողովներում վայելում է միայն մի ձայնի իրաւունք, որը չէ կարող յանձնվել ոչ ոքի։

§ 32. Եթէ անդամներից որևէ մէկը ցանկանայ տարեկան սովորական ընդհանուր ժողովին անել որևէ առաջարկ, պարտաւոր է այդ մասին մի ամիս առաջ գրաւոր յայտնել վարչութեանը, որը քննելով այդ առաջարկը և լրացնելով անհրաժեշտ ցուցումներով և խորհրդածութիւններով իր գրաւոր եզրափակութեան հետ, ներկայացնում է ընդհանուր ժողովի քննութեան և վճռին։

VI Վերաստուգող յանձնաժողով

§ 33. Ընկերութեան դրամական գումարների, ելմուտքի մատեանի, արդարացնող վաւերաթղթերի, գործի և հաշիւների ստուգութեան համար ընդհանուր

ժողովը ընտրում է իւրաքանչիւր տարի վերաստուգող յանձնաժողով, բաղկացած երեք անդամից և երկու փոխանդամից։ Վերաստուգող յանձնաժողովը ստուգման արդիւնքների մասին զեկուցում է առաջին ընդհանուր ժողովին։

§ 34. Ընկերութեան հաշիւը կազմվում է առ մէկը յունուարի իւրաքանչիւր տարւայ և վերաստուգող յանձնաժողովի ստուգութիւնից յետոյ ներկայացվում է ընդհանուր ժողովի հաստատութեան։

VII Ընդհանուր կանոններ

§ 35. Վարչութիւնը գտնվում է Թիֆլիսում և ունի կնիք «Թիֆլիսի հայ արհայնագործական ընկերութիւն» վակագրութիւնը։

§ 36. Գործավարութեան մանրամասնութիւնները, հաշուետուութեան մանրամասն կարգը և վերաստուգող յանձնաժողովի պարտաւորութիւնները որոշվում են ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգներով, որոնք կազմված կը լինեն հաստատված կանոնադրութեան շրջանակներում։

§ 37. Ներկայ կանոնադրութեան լրացման կամ փոփոխութեան ենթադրութիւնները ընդհանուր ժողովին ներկայ եղած անդամների 2/3-ի հաւանութիւնը ստանալուց յետոյ առաջարկվում են հաստատութեան սահմանված կարգով։

§ 38. Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերել իր նպատակների համար անշարժ կալուածք և վաճառել նրան, կազմել ամեն տեսակ պայմանագիրներ և

համաձայնութիւններ, նոյնպէս պաշտպանել իր շահերը դատարանում լիազօրների միջոցով։

§ 39. Ընկերութեան գործունէութեան տարեկան հաշիւը, հաստատված ընդհանուր ժողովից, կարող է ժողովի հայեցողութեամբ տպագրվել պարբերական հրատարակութիւնների մէջ, նոյնպէս առանձին գրքոյկներով։

VIII Ընկերութեան փակումը

§ 40. Եթէ որևէ պատճառներով անհրաժեշտ ճանաչվի փակել Ընկերութիւնը, այդ հարցը վճռվում է երկու Ընդհանուր ժողովներով, որոնք միմեանցից բաժանված կը լինեն բաւական ժամանակամիջոցով։ Առաջին ժողովի որոշումից յետոյ փակման մասին՝ դադարեցվում է օպերացիաների գործողութիւնը։

§ 41. Երկրորդ և վերջին ընդհանուր ժողովի վերջնական որոշմամբ գործերի լիկվիդացիայից յետոյ մնացած գումարները ստանում են այնպիսի գործադրութիւն, որպիսին կը սահմանի ընդհանուր ժողովը։

IX Ընկերութեան ճիւղերը

§ 42. Ընկերութեան ճիւղերը բացվում են Ընկերութեան վարչութեան ձեռքով, երբ ստացված կը լինի ոչ պակաս, քան հինգ հոգի տեղական գործողների կողմից յայտարարութիւն։ Վարչութիւնը այդ մասին տեղեկացնում է նահանգական իշխանութեանը։

§ 43. Տեղական ճիւղի վարչութիւնը բաղկացած է 3—6 անդամից և 2 փոխ-

անդամից։

§ 44. Ճիւղերը ղեկավարվում են ներկայ կանոնադրութեան ցուցումներով։ Նրանք պարբերաբար հաղորդում են տեղեկութիւններ իրանց գործունէութեան մասին կենտրոնական վարչութեանը, որը ունի վերահսկութեան իրաւունք նրանց վրա։ Կենտրոնական վարչութեան յարաբերութիւնները ճիւղերի հետ որոշվում են կենտրոնական ընկերութեան ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգներով։

Հանրային գրադարան Գոս. Գրադարան ՀԱՍՍՀ-ԱՄՆ.ԵՍՍՀ

Ընկերութեան հասցէն՝ Тифлисъ въ Правленіе Тифлисскаго Армянскаго Кустарнаго Общества.

4
8

2013
<< Ազգային գրադարան
1232
NL0045807

3-158a